

Լիզինգային ֆինանսավորման տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Նախնական փաստաթղթերի ցանկը ներառում է.

- ԱԶՌԱ-ի Դիմում-հայտ
- Իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրության պատճեն, իսկ անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաստաթուղթ
- Պետական ռեգիստրի կողմից տրված պետական գրանցման վկայականի պատճեն
- ՀՎՀՀ (հարկային կոդ):

Ֆինանսավորման տրամադրման որոշման կայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառում է.

- Ֆինանսավորման ստացման հայտ
- Որպես գրավ առաջարկվող միջոցների (անշարժ գույք, հիմնական միջոցներ, շարժական գույք, ապրանքանյութական արժեքներ և այլն) սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր
- Առաջարկվող գրավի գնահատման (վերագնահատման) նախնական ակտ կամ արժեքի որոշման հիմք
- Հիմնադիրների, տնօրենի և գլխավոր հաշվապահի անձնագրեր (անձը հաստատող փաստաթղթեր) և հանրային ծառայությունների համարանիշեր կամ վերջիններս չստանալու վերաբերյալ տեղեկանք
- Ֆիզիկական անձ գրավատուների, երաշխավորների դեպքում՝ վերջիններիս անձնագրերի կամ անձը հաստատող փաստաթղթերի պատճեններ, երաշխավորների համաձայնությունը վարկային պատմության վերաբերյալ հարցումներ կատարելու համար
- Տեղեկանք հարկային տեսչությունից՝ պարտավորությունների վերաբերյալ
- Մասնագետի պահանջով այլ փաստաթղթեր:

Ֆինանսավորման տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառում է.

- Ընդհանուր ժողովի կամ միակ մասնակցի որոշման արձանագրության քաղվածք՝ ֆինանսավորում ստանալու և գրավադրվող գույքի վերաբերյալ
- Որպես գրավ առաջարկվող միջոցների սեփականության հիմք, եթե նախորդ փուլում չի տրամադրվել
- Գրավի ապահովագրության վերաբերյալ փաստաթղթեր, ապահովագրավճարի անդորրագրեր (ապահովագրության պահանջի դեպքում)
- Կադաստրի տարածքային ստորաբաժանումների կողմից տրված միասնական տեղեկանք՝ գրավադրվող գույքի վերաբերյալ
- Տեղեկանք ՊԱՏ-ից գրավադրվող մեքենայի արգելանքի կամ դրա բացակայության վերաբերյալ
- Գործունեության ծավալման վայրի սեփականության կամ վարձակալության վկայականի պատճեն, կամ էլ վարձակալության պայմանագրի պատճեն, կամ հաճախորդի գործունեության վայրի նկատմամբ իրավունքներ հաստատող այլ հիմք՝ տեղեկանք և այլն,

Ֆիզիկական անձի դեպքում՝ տեղեկանք (օրինակ՝ գյուղապետարանից) գործունեության վայրի վերաբերյալ

- Բանկի պահանջով՝ գրավադրվող գույքի ձեռքբերման հիմնավորող փաստաթղթերի պատճեններ
- Գյուղատնտեսական վարկերի դեպքում՝ Գյուղապետարանից տեղեկանք:
- Համատիրությունից տեղեկանք՝ ձև 2
- Բաց բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ բաժնետերերի մասին ռեեստրի տեղեկանք:

Կախված Լիզինգի առարկայից՝ կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր: